

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԲԱՂՉՈՒԹՅԱՆ  
ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Գաղթ» կամ «գաղթականություն» բառը ընդամենը բառ է, սակայն հայ ժողովրդի համար այն բազմիմաստ շերտեր է պարունակում իր մեջ: Նախ՝ անձնական, զգայական, հոգեբանական, գիտակցական, ընտանեկան, սոցիալ-տնտեսական, ապա՝ հասարակական, քաղաքական, տարածքային, պահանջատիրական և այլն: Քանի որ Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքում արևմտահայության բռնագաղթի անասելի տառապանքները ժողովուրդն ինքն է կրել, հետևաբար ժողովուրդն ինքն է այդ զանգվածային քաղաքական հանցագործության առարկան (object): Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրը, ապացուցողական նշանակություն ունենալով, հանգամանորեն բացահայտում է երիտթուրքերի, ապա՝ քեմալականների կողմից իրականացված այդ դաժան գործընթացը. նախ՝ պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերից (1915-1918թթ.), ապա՝ Կիլիկիայից (1921թ.) և ի վերջո՝ Չմյուռնիայից (1922թ.):

Սասունցի ականատես-վկա **Եղիազար Կարապետյանը** (ծնվ. 1886թ.), վերհիշելով անցյալի պատմական իրողությունները, նկարագրել է 1915թ. Տարոնի դաշտի հայության բռնագաղթը. «*Հունիսի 28-ի օրը ոչ բարով Կարդավառի կիրակին էր. հայ ժողովրդի ուրախության տոնը, ավա՛ղ, դարձավ «մարդավառի» կիրակի՝ Տարոնի դաշտի հայության համար: Կիրակին և հաջորդ գիշերը տեղի ունեցավ Մշո դաշտի գյուղերում անմեղ ու անզեն կանանց և երեխաների բնաջնջումը... Լույս երկուշաբթի առավոտ դաշտի բոլոր մասերում այլևս ոչ մի կենդանի հայ չէր շարժվում: Միայն հրկիզված գյուղերի վրա թանձր ծուխ էր նստել, ճենճահոտը տարածվել էր մթնոլորտի մեջ, որը գալիս, հասնում էր մինչև մեր [Սասնա] լեռները: Այսպես, դարերի ընթացքում հողին ու մաճին կառչած հայաշատ այդ գավառը մի ցրեկվա և մի գիշերվա մեջ դարձավ ամայի՝ անմարդաբնակ, իսկ նրա սեփական տերերը՝ անողոք թուրքերի ու քրդերի*

ծեռքով հրեշային գործողությամբ սրով մորթվեցին, կրակով այրվեցին, ջրով խեղդամահ եղան՝ հարյուր հինգ գյուղերի յոթանասուն-ութուն հազար երկու սեռի պատկանող հայ բնակիչները: Թալանի տրվեց միլիոնների հասնող նրանց հարստությունը»:<sup>1</sup>

Այսպիսով, հազարամյա բնօրրանից, հողից, տնից, տեղից, ունեցվածքից զրկված արևմտահայ վերապրողն իր հուշն ավարտում է հետևյալ խոսքերով. «...Թույլ տվեք ... վերջին անգամ «Մնա՞ք բարով» ասել որբացած հայրենիքին, նրա սրբավայր տաճարներին, հուշարձաններին, ծաղկաբույր լեռներին, արգավանդ դաշտերին, գետերին ու աղբյուրներին և որպես գաղթական մարդ՝ իմ սակավաթիվ հայրենակիցների հետ հյուրընկալվել ու ապրել դեռ սովի, գաղթի ու արյունահեղության մատնված Արևելյան Հայաստանում»:<sup>2</sup>

Գաղթի ճամփաներին զուգահեռաբար հյուսվել է նաև ժողովրդի ցավագին եղերերգը՝ մշեցի **Շողեր Տոնոյանի** (ծնվ. 1901թ.) կողմից.

*«Անտեր թողինք Մշո անուշ դաշտ, դուրան,  
Սուրբ օթևան, տուն ու տանիք ու վաթան,  
Մատուռ ու վանք, գիրք ու կանոն, Ավետարան,  
Մնաց անտեր, մնաց՝ ընկավ շան բերան»»:<sup>3</sup>*

Եվ շարունակում է նշել կորուստները.

*«... Գիշեր ու գօր լաց ու ողբ եմ ես լսում,  
Չունիմ հանգիստ, չունիմ դադար, չունիմ քուն,  
Աչքս փակում՝ մեռելներ եմ միշտ տեսնում,  
Կորցրեցի ազգ, բարեկամ, հող ու տուն»»:<sup>4</sup>*

«... Գաղթը ահավոր իրադարձություն է մի ժողովրդի համար, որը դարեր շարունակ ապրել է իր հարազատ երկրում, - ասել է վանեցի ականատես վկա **Աղասի Քանքանյանը** (ծնվ. 1904թ.) և

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 45:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 453:

<sup>4</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 414:

շարունակել: - Մեր ընտանիքն էլ պատրաստվեց: Մայրիկիս ղեկավարությամբ որոշվեց, թե ի՞նչ վերցնենք մեզ հետ, որ դիմանանք տասը օրվա հետիոտն ճամփորդությանը: ... Սկսեցինք շարժվել դեպի գլխավոր փողոցը՝ խաչփողան: Տներից նորանոր ընտանիքներ էին դուրս գալիս և միանում իրար: Թափորը մեծանում էր ու շարժվում դեպի առաջ: Մենք մինչև Իգդիր հասնելը տասը օր ճանապարհ անցանք, անձրևի տակ, արևի տակ, ցեխերի մեջ՝ կիսաքաղց ու ծարավ: Ծանապարհին քրդերը հաճախ վրա էին տալիս, մարդկանց կոտորում, թալանում: Դա հատկապես տեղի ունեցավ Բանդիմահու կամուրջի մոտ, որտեղ կուտակում էր տեղի ունենում: Այդ կամուրջից ինչքան մայրեր երեխաներին գրկած՝ ջուրն են նետվել, որ թուրվում էին, ովքեր մահանում էին, թողնում էին ճանապարհի եզրին, շատ դեպքերում ծածկում էին հողով, շատ դեպքերում՝ ոչ: Անթաղ դիակներ տեսնելով՝ ես այնպես եմ ազդվել, որ ստացել եմ տխրացավ, և մինչև հիմա այդ շարունակվում է: Ես լիաթոք չեմ կարող ուրախանալ: Չնայած ես մեր թաղի ամենաառողջ երեխան էի, ծյան վրա բոբիկ վազում էի և չէի հիվանդանում, բայց գաղթից հետո այդ կարմրաթուշիկ, առողջ երեխան գունատվեց, խամրեց, տխրեց, դարձավ չխոսկան: Մայրս հայրիկիս ստիպեց ինձ տանել բժշկի: Արդեն մենք երևանում էինք: Հայրս երկու ամսում երկու ոսկի հավաքեց, որ բժշկին տա: Եվ հայրս ինձ տարավ բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանի մոտ, որը գավազանով և ֆայտոնով էր ման գալիս: Բժիշկը քննեց ինձ ու ասաց. - Տղան ոչ մի հիվանդություն չունի:

- Բա ինչի՞ չի խոսում, նիհարել է, գույնը գցել է:

- Որտեղացի՞ եք:

- Վանեցի գաղթական ենք:

- Տղան գաղթի ճամփին այնքան տխուր դեպքեր է տեսել, որ տխրացավ է ստացել, դա հետևանք է գաղթի: Տխուր դեպքերը ազդել են նրա վրա»:<sup>1</sup>

Սա դեռ մեկ երեխայի հոգեբանական-տրավմատիկ վիճակն է եղել: Կարելի է պատկերացնել, թե ինչ են զգացել և ինչպես են

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 98-99:

գոյատևել հարյուր հազարավոր բռնագաղթվածները, որոնք Արաքսն անցնելով, եկել-ծվարել են Արևելյան Հայաստանում:

Բավական է ծանոթանալ նրանց հուշ-վկայություններին, որոնք ընդգրկում են արևմտահայերի ոչ միայն *գաղթը*, այլև՝ նրանց բաժին ընկած *«տեղահանությունը»*, որը ոչ այլ ինչ էր, քան *բռնագաղթ* դեպի սիրիական անապատներ՝ Դեր էլ Ջոր, Սուրում, Ռաս ուլ Այն, Ռաքքա, Մեսքենե, Շեդդադիե և այլ կենդանի գերեզմանոցներ, և այդ բռնագաղթի ընթացքում, պատմության մեջ չլսված ու չտեսնված դաժան ձևերով նրանց ոչնչացրել (ատամները և եղունգները քաշել, ոտքերը պայտել, ծառից գլխիվայր կախել, ողջ-ողջ մաշկահան անել, հղի կանանց փորերը ճեղքել՝ պտուղը ցցի վրա հանել, աղջիկներին խաչել կամ ցցերի վրա նստեցնել, մանուկներին ոտքերից բռնած՝ երկու կես անել, թուրք բարձրաստիճան հեծյալի ոտքերի առաջ հայ պատանիներին խոյի կամ նոխազի փոխարեն գոհ մատուցել և այլ աներևակայելի դաժանություններ):

*Տեղահանության-բռնագաղթի* ընթացքում հայ ժողովուրդն այդ բոլորը տեսել է իր աչքերով, զգացել իր զգայարաններով և իր հետագա կյանքի ընթացքում ևս անընդհատ վերհիշել է մղ-ձավանջային այդ տեսարանները՝ կրկին ու կրկին վերապրելով: Այդ է պատճառը, որ ականատես վկաները վերհիշել են հենց Դեր Ջորի անապատում հորինված թուրքալեզու երգերի ավելի քան 150 քառյակների տարբերակներ.<sup>1</sup>

*«Ձատիկ-կիրակի» չաղըր ստօքթիլեր, Բիթլին էրմենիլերի չտոլտ դտօքթիլեր, Բէջի գիբի էրմենիլերի քեսթիլեր, Դիմիմին ուղրունա տոլեն էրմենի»:*

*«Ձատիկ-կիրակի» վրանները քանդեցին, Բոլոր հայերին անապատը լցրեցին, Այծերի պես հայերին մորթեցին, Հայերն են մեռնում հանում հավատքի»:<sup>2</sup>*

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 418-426:

\* Թուրքալեզու երգի մեջ օգտագործված են հայերեն «Ձատիկ-կիրակի» բառերը:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 421:

*Եվ կամ՝ «Դեր Ջոր դեղիքլերի բիսիւք քասարա, Բէսիլէն էրմենի գէլմեգ հեսափա, Օսմանլը էֆրաթը դեօնմիւշ դասափա, Դիմիմին ուղրունա տոլեն էրմենի»:*

*«Դեր Ջոր կոչվածն էր մի մեծ տեղավայր, Սորթված հայերին էլ հաշիվ չկար, Օսմանցի պետերը մսագործ դարձան, Հայերն են մեռնում հավատքի համար»:<sup>1</sup>*

Թեպետ անգն ու անդեկ մնացած արևմտահայությունն ինքնապաշտպանական-դիմադրողական հերոսամարտեր է մղել Վանում, Շատախում, Սասունում, Շապի-Գարահիսարում, նաև Կիլիկիայում՝ Մուսա Լեռում, Ուրֆայում, ավելի ուշ՝ Մարաշում, Այնթապում, Հաճընում և այլուր: Սակայն, «Վրեժ» գոռալով, ընկնում է ութ ամիս դյուցազնաբար պայքարած Հաճընը, ընդհատումներով 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, քաջարի «արծվաբույն» Չեյթունը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր: Ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները, 1921թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքված պայմանագրով, Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը, որոնք ստիպված բռնում են *գաղթի* ճամփան:

1921թ. Կիլիկիայի հայության պարպումից հետո հերթը հասել էր Անատոլիայի հայերին, որոնց մեծ մասն արդեն եղեռնի ժամանակ անխնա կոտորվել էր, իսկ հրաշքով փրկվածներն իրենց գոյությունը շարունակում էին հունական գերիշխանության տակ գտնվող որոշ հայաբնակ վայրերում և հատկապես նավահանգիստ Ջմյուռնիայում (Իզմիր):

1922թ. քեմալականները հրո ճարակ են դարձնում նաև Ջմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ: Այդ ահասարսուռ իրադարձությունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ»:

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 419:

Հուզումով վերհիշելով այդ ահավոր տեսարանները, աֆ-  
իոնգարահիսարցի վերապրող Արփինե Բարթիկյանը (ծնվ.  
1903թ.) վկայել է իր տեսածն ու զգացածը. «...Մեյ մըն ալ  
սկսավ միլիական (ազգայնական - թուրք.) շարժումը: Իզմիրը  
կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ա. Ստեփանոս  
եկեղեցին այրեցին: Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին  
մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնա-  
ցինք ծովեզերք: Ծովին վրա լի՞քը նավակներ էին, բայց թուր-  
քերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուրը լցվի ու  
հայերը չկրնան ազատվիլ: Նավակ էին նստում խեղճ հայերը,  
քիչ մը կլողար նավակը, վերջը՝ լը՛կ-լը՛կ, ջուրը կլեցվեր մեջը,  
բոլորը ծովի մեջ շուռ կուզային: Ծովի վրա լի՞քը ուռած  
մարմիններ էին»:<sup>1</sup>

Եվ ժողովրդի տառապանքի հետ դարձյալ հյուսվել է գաղթի  
տխրաթախիժ եղերերգը.

*«Աֆիոնեն՝ դուրս էկանք,  
Իզմիր քաղաքը մտանք,  
Ազիզ մորս չգտա.  
Հոնկու՛ր-հոնկու՛ր լաց եղա:*

*Ա՛խ, մամա՛ ջան, խաբեցին,  
Ինձի քեզնից բաժնեցին,  
Քեզ ալ կրակը նետեցին.  
Չըթը՛ր-չըթը՛ր այրեցին...»:<sup>2</sup>*

Գրությունն օրհասական էր ու անել. ետևը՝ հուր, առաջը՝  
ջուր: Թոհ ու բոհի այդ գեհեմից ազատվում էին միայն նրանք,  
ովքեր իրենց մնացած վերջին ոսկեդրամներն ու զարդերը տա-  
լիս էին թուրքերին՝ իրենց կյանքը փրկելու համար, իսկ նրանք,  
ովքեր ոչ մի միջոց չունեին, արհամարհելով մահը, նետվում էին  
ծովի հուժկու ալիքների մեջ՝ լողալով հասնելու հեռվում խա-  
րիսխ գցած եվրոպական դրոշներ կրող շոգենավերին, որոնք  
հայ անտունիներին տանելու էին ուր որ պատահեր.

<sup>1</sup> Սվազլյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 334:

<sup>\*</sup> Աֆիոն-Գարահիսար քաղաքը:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 433:

*«...էլանք Պոլիս գնացինք,  
Ժամուն դուռը մնացինք,  
Հաց ու գեյթուն տվեցին,  
Երեք օր մեզ պահեցին:*

*Անկե փախանք Հունաստան,  
Շատ շատերն ալ՝ Ֆրանսա,  
Մեկալները՝ Եգիպտոս.  
Սապես ցրվանք ամեն կողմ»:<sup>1</sup>*

Եվ ստեղծվեց Հայ Սփյուռքը որպես պատմական իրողու-  
թյուն:

Պապենական հողից արմատախիլ եղած հայ գաղթական-  
ներն անձանոթ երկրներում, անտեղյակ օտար լեզուներին ու  
օրենքներին, միայն էժան աշխատուժ էին, ինչքան էլ որ օտար-  
ների հիացմունքին արժանանային հայկական տոհմիկ արհես-  
տավորների վարպետությունը և կամ՝ բազմաշնորհի հայ կա-  
նանց նրբագեղ ձեռագործներն ու գորգերը: Այնինչ ծուլունի,  
այլասերունի և մանավանդ գործազրկության սարսափը հան-  
գիստ չէր տալիս աստանդական հայերին.

*«...Օտարության մեջ ինկեր ենք,  
Կուլամ կարոտո՛վ-կարոտո՛վ,  
Հայ խնդիրը լուծվեր շուտով.  
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛:*

*Ուրախացիր, մի՛ լար տխուր,  
Ոտքիդ վրա կայնի՛ր ամուր,  
Շուտով կլսես Ներգաղթի լուր.  
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛»:<sup>2</sup>*

Ու ներգաղթի իրարահաջորդ քարավաններով սկսվում է  
անտուն ու անհայրենիք մնացած արևմտահայերի Հայրենա-  
դարձությունը դեպի Արևելյան Հայաստան. նախ՝ 1920-1930-  
ական թթ. Կոստանդնուպոլսից, Ֆրանսիայից և Հունաստանից:  
Ապա՝ 1946-1948թթ. զանգվածային հայրենադարձությունը

<sup>1</sup> Սվազլյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 334:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 456:

Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրաքից, Ֆրանսիայից, Յունաստանից, բալկանյան երկրներից և հեռավոր Ամերիկայից...

Եվ նոր ժամանակների հետ զուգընթաց հյուսվել է նաև ժողովրդական հայրենաբաղձ երգը.

*«Կարոտցեր եմ քեզի, շքեղ Երևան,  
Շատ ծովերեն բարձր ոսկե լիճ Սևան,  
Չկներ ունիս խորքումդ՝ կողակ ու իշխան,  
Յոգիս վկա լինի, կյանքս քեզ կուտամ:*

*Յե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Յայաստան,  
Յե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան:*

*Երևա՛ն, սիրելիս, դու միշտ անսասան,  
Շրջապատված ունիս այգի, բուրաստան,  
Օդդ, ջուրդ՝ անուշ, տեսքդ՝ աննման,  
Ով չի սիրում քեզի՝ հայ չէ իսկական:*

*Յե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Յայաստան,  
Յե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան...»:<sup>1</sup>*

Եվ կամ՝

*«...Լուսնակ գիշեր քեզ կկանչեն ու դուն չես լսեր,  
Կարոտցեր եմ ազիզ եղբորս. քունս չի տանիր:*

*Անապատի փշերից դեն քշի՛ր քո ծամփան,  
Կարոտցեր եմ Մասիս լեռան. քունս չի տանիր:*

*Յայաստանեն նավը եկավ դեպի Լիբանան,  
Լիբանանեն հայեր տարավ դեպի Յայաստան...  
Ա՛յ քարավան, ջա՛ն քարավան, քշի՛ր Յայաստան,  
Կարոտցեր եմ Յայրենիքիս. քունս չի տանիր»:<sup>2</sup>*

Յայրենադարձները խորհրդային Յայաստան էին գալիս լի հույսերով ու հավատով: Գալիս էին հայրենադարձների խու-

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Յայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 456:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 457:

ոներամ քարավանները՝ ոգեշնչված Երկրորդ Աշխարհամարտում խորհրդային Միության նվաճած հաղթանակով և մանավանդ նրա 1945թ. նոյեմբերի 1-ին թուրքիային առաջադրած հայկական ու վրացական հողերի պաշտոնական պահանջով... Ու մեծ հույսերի հետ բերնից բերան հյուսվում էր նաև ժողովրդական երգը.

*«Յայաստան երթալ կուզեմ,  
Երևան տեսնալ կուզեմ,  
Արարատի գագաթին  
Դրոշակ պարզել կուզեմ»:<sup>1</sup>*

Այդ օրերին է հյուսվել նաև պահանջատիրական շեշտադրությամբ հետևյալ երգը.

*«Քշի՛ր, հե՛յ ջան քարավան,  
Մեզ կսպասե Յայաստան.  
Թող ողջ աշխարհն իմանա՝  
Մերն է Կարսն ու Արդահան:*

*... Կուզենք զայն, կուզենք զայն.  
Մերն է Կարսն ու Արդահան,  
Թե չիտան՝ զեն-գորքով  
Պիտի առնե Բաղրամյան:*

*... Կարս-Արդահանը մեզի  
Պիտի շուտով դարձվի,  
Որ այդ հողերն ամայի  
Փոխակերպենք դրախտի»:<sup>2</sup>*

Թեպետ հայրենագրկված ու անտուն մնացած արևմտահայ հայրենադարձները, Յայրենիքում հաստատվելով, իրենց կորցրած պատմական Յայաստանից 10 անգամ փոքր հողատարածքի վրա, ստեղծում են բնօրրանի հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր (Նոր Կիլիկիա, Նոր Ջեյթուն, Նոր Մարաշ, Նոր Յաճըն, Նոր Այնթապ, Նոր Մուսա Լեռ և այլն),

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Յայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 456:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 457:

սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մրմուռը շարունակում է մխալ նրանց հիշողության մեջ, ու, բռնազավթված երկրի երազանքը հոգու կանչ դարձած, ավանդվում է սերնդից սերունդ.

*«Երբ որ բացվին դռներն հույսի,  
Եվ մենք երկիր դառնանք կրկին,  
Չքնաղ երկիր մեր Հայրենյաց,  
Որ բռնությամբ առին մեզնից:*

*Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.  
Օղը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,  
Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.  
Վանքեր, բերդեր հոնտեղ շա՛տ կան:*

*Երբ որ լուծվի Հայոց Հարցը,  
Եվ մեզ տրվի նախնյաց հողը,  
Մենք կվարենք մեր արտերը,  
Կշենացնենք մեր գյուղերը:*

*Ցանկամ տեսնել Սասուն ու Վան,  
Ջեթուն, Հաճըն և Մուսա Դաղ,  
Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,  
Կծաղկացնենք մենք անպայման»:<sup>1</sup>*

Այնպես որ, արևմտահայ հայրենադարձներն Արևելյան (Խորհրդային) Հայաստան էին գալիս նաև իրենց բռնազավթված երկրի արդարահատույցի մեծ հույսերով: Սակայն այլ էին պատմական հանգամանքները...

Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած բանահյուսական նյութերի մեջ արժարժվել է նաև ժողովրդական հստակ մտածելակերպն արդի միջազգային քաղաքական հարաբերությունների և Արցախյան հիմնահարցի վերաբերյալ.

*«Ղարաբաղը մեր փոքրիկ*

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 454:

*Մասն է Հայոց աշխարհի,  
Ինչու՞ թողնենք օտարին,  
Երբ հայերն են հոն բնիկ»:<sup>1</sup>*

Եվ ժողովրդական երգը հնչում է որպես միասնական պայքարի համազգային պատգամ.

*«Մեր հայ եղբայրներ, մենք շա՛տ լռեցինք,  
Բավական է մեզ ասչափ համբերենք.  
Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,  
Հիմա ուժ ունենք՝ ետ առնենք նորից»:<sup>2</sup>*

Արցախահայության պատմական այդ մեծ խիզախունը ևս դարձել է այսօրվա Սփյուռքում ապրող արևմտահայերի ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, քանզի այն խորհրդանշում է նաև բռնազավթված Հայրենի երկրի ազատագրման նվիրական երազը...

#### ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր  
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի առաջատար գիտաշխատող

<sup>1</sup> Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2000, էջ 457:

<sup>2</sup> Նույն տեղում: